ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№24/ 461

Ձեր _____

«25» 02 2015թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
իրավաբան Գ.Հայրապետյանին
Ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված Ձեր 13.02.2015թ. թիվ 241-ի 7 գրության.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն. «Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք»:

Ձեր կողմից հայցվող տեղեկատվությունը «ՀՀ ոստիկանությունում գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված՝ գերատեսչական ցանկերը հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի 18.02.2005թ. թիվ 2-Նգ հրամանի համաձայն՝ համարվում է գաղտնի, հետևաբար տրամադրման ենթակա չէ:

Միաժամանակ հավելեմ, որ սույն գրության հետ համաձայն չլինելու դեպքում, այն կարող եք բողոքարկել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում:

ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ *Մ. ՀԱԿՈԲՅԱՆ*

Կատարող՝ Ա. Պիվազյան
Հեռ. 59-66-08